

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ 2014Թ.
1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժինը 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հետևել է մարզի ավագանիների և համայնքի ղեկավարների որոշումների համապատասխանությանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Ավագանիների կողմից ընդունվել են որոշումներ, որոնք հիմնականում վերաբերվում են համայնքների բյուջեների ընդունմանը, դրանցում կատարված գումարային և հողվածային վերաբաշխումներին, գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունների, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի, դրույքաչափերի հաստատմանը, համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օտարմանը համաձայնություն տալուն և ներհամայնքային այլ խնդիրների: Անհամապատասխանությունների և թերությունների հայտնաբերման դեպքում որոշումները վերադարձվել են համայնք՝ համապատասխան ուղղումների, որոնք սահմանված կարգով ուղղվել և վերադարձվել են մարզպետարան: Նշված ժամանակահատվածում մարզի ավագանիների կողմից ընդունվել է 709 որոշում, որի արդյունքում հայտնաբերված խախտումները ուղղելու և թերությունները վերացնելու նպատակով պաշտոնական գրությամբ վերադարձվել է մեկ համայնքի ավագանու կողմից ընդունված 1 որոշում, և 2 համայնքների ղեկավարների կողմից ընդունված 3 որոշում:

Բաժնի կողմից տրվել են բանավոր խորհրդատվություններ ինչպես քաղաքացիների, այնպես էլ համայնքի ղեկավարների և գյուղապետարանների աշխատակազմերի աշխատակիցների:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է մարզպետարանի աշխատակազմի վարչությունների և բաժինների կողմից նախապատրաստված մարզպետի որոշումների և կարգադրությունների նախագծերի ուսումնասիրություն և տրվել է իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ եզրակացություններ:

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 24.06.2014 թվականի թիվ 01/15/3279-14 հանձնարարականի համաձայն, բաժնի կողմից ներկայացվել է տեղեկատվություն՝ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև համագործակցության վերաբերյալ՝ ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 32-րդ կետի պահանջների:

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 23.02.2010թ. թիվ 01/15/1011-10 հանձնարարականի պահանջի համաձայն, բաժնի կողմից յուրաքանչյուր ամիս

ներկայացվում է տեղեկատվություն՝ մարզի համայնքների ավագանիների որոշումները մարզպետարան ներկայացնելու վերաբերյալ:

Փոխառության պայմանագրով սերմացուի վճարման համար նախատեսված դրամի բռնագանձման պահաջով բաժինը հաշվետու ժամանակաշրջանում դատարան է ներկայացրել թվով 4 հայց, որոնք գտնվում են դատաքննության փուլում:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77²-րդ հոդվածի հիման վրա ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 159-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրին համապատասխան, վարչական հսկողության շրջանակներում բաժինը մասնակցել է Եղեգնաձոր, Արտավան, Գնդևազ, Սալլի և Զեդեա համայնքներում կատարված վարչական ուսումնասիրություններին:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

Ա.ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

01.07. 2014թ.